ՔԱՐՈԶԽՍՈՒԱԿՆԵՐ

Տ. ՍԱՀԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՇԱԼՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕԾՄԱՆ ԵՒ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅԱՆ 13-ՐԴ ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ

(4 նոյեմբեր, 2012)

Անուամբ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Իմ մայրը եւ եղբայրները ասոնք են,
որոնք Աստուծոյ խօսքը կ՚լսեն եւ կը կատարեն»
(Ղուկ. Ը. 21):

Շատ լաւ գիտէք, թէ ինչ առիթով մեր Տէր Յիսուս Քրիստոսը արտասանեց այս խօսքերը: Իր քարոզած պահուն՝ այն տունի մէջ այսպէս խուռն բազմութիւն կար: Իր մայրը եւ ազգականները եկած էին տեսնելու, բայց չէին կրցած հասնիլ բազմութեան պատճառով: Լուր ուղարկեցին Տէր Յիսուսին, որ մայրդ եւ եղբայրներդ եկած են եւ տեսնել կուզեն քեզ: Եւ Տէր Յիսուս չուզեց բաց թողուլ այս առիթը՝ ձեռքը երկարելով անոնց, որոնք կը լսէին Իր խօսքերը, ըսաւ. «Ո՞վ է իմ մայրս, եղբայրներս, քոյրերս»: «Անոնք, որոնք կը լսեն եւ կը կատարեն Աստուծոյ խօսքերը, անոնք են իմ մայրս եւ եղբայրներս»: Հարկաւ թէ Տէր Յիսուսի նպատակը չէր իր մայրը եւ եղբայրները փոքրացնել, վարկաբեկել, այլ բոլոր իր ունկնդիրները բարձրացնել կուզէր այն մակարդակին, որ Աստուած ստեղծած է եւ տեսնել կուզէ մեր բոլորը: Մարդը ստեղծուեցաւ Աստուծոյ պատկերով եւ նմանութեամբ, սակայն այդ պատկերը եւ նմանութիւնը, որպէսզի կատարելագործուի, մարդը պէտք է սովրեր իր ազատ կամքով Աստուծոյ **այո** ըսել եւ կատարել Անոր հրամանները: Եւ պատմութիւնը կը փաստէ, որ ամենէն դժուար գործն է մարդու համար Աստուծոյ **այո** ըսել: Տէր Յիսուս եկաւ իր Գէթսեմանիի աղօթքով մեզի սովրեցնելու, թէ ինչպէս մենք պէտք է հաւատացեալ դառնանք՝ ոչ թէ մեր ուզածին պէս, ոչ թէ Իմ կամքը, այլ Քու կամքդ թող ըլլայ՝ խօսքը ըսելով եւ այդ կամքը դրսեւորելով: Լսելու եւ կատարելու միջեւ, սիրելիներ՛ը, մեծ անդունդ կայ, որովհետեւ մենք ներքին աշխարհ ունինք, սիրտ ունինք, երեւակայութիւն, ըղձանքներ ունինք եւ հազար ու մէկ բաներ մենք կը երեւակայենք: Հարկաւ թէ այդ մեր երեւակայածներուն, մեր փափագներուն եւ մեր հաւատքին մեծամասնութիւնը պիտի առնենք, մենք մեզի հետ պիտի տանինք գերեզման եւ հոնկէ պիտի փոխանցուի մեր ոսկորներու հետ միասին: Պէտք չէ մենք մեզի խաբենք: Յակոբոս առաքեալը յստակ կը դնէ այն

հանգամանքը, որ հաւատքը առանց գործերու ունայն է: Հետեւաբար ըստիպուած ենք մենք մեր ներքին աշխարհը դրսեւորելու:

Վանքի մը մէջ տեսական մի վէճ կը ծագի վանականներու միջեւ, չեն կրնար վճռել եւ մօտակայ Սուրբի մը կ'երթան եւ իրենց հարցը կը դնեն: Կըսեն որ երկու մարդ կար, ասոնցմէ մեկը քառասուն տարի որպէս մեղաւոր ապրեցաւ, բոլոր մեղքերը գործեց, բոլոր չարութիւնները իրագործեց, քառասուն տարուայ վերջաւորութեան գիշեր մը ըսաւ, որ կը բաւէ, այլեւս վաղը պիտի ապաշխարեմ, վանք պիտի երթամ, պիտի գոչամ բոլոր իմ մեղքերս եւ ամբողջ իմ կեանքիս մնացած օրերը վանք պիտի անցնեմ: Բայց մարդը կը մեռնի այս գիշեր: Իսկ միւսը վանական է, քառասուն տարի ճգնած է վանքին մէջ, իր հաւատքը վառ պահած է, աղօթքով, ծոմապահութեամբ անցուցած է իր կեանքը, քառասուն տարուայ վերջաւորութեան կըսէ, որ կարծեմ ես սխալ գործեցայ, պէտք է երթամ աշխարհ եւ այն բոլոր մեղքերէն, որ ես ինձի զսպեցի, պէտք է գործեմ անոնք եւ պէտք է աշխարհ վերադառնամ: Բայց վանականը կը մեռնի այդ գիշեր:

Վանականներու հարցումը Սուրբին այս է, որ ինչ պիտի ըլլայ յետ մահու այս մարդկանց վիճակը: Երբ որ ես այս հարցումը իմ քարոզելուս մէջ կը հարցնեմ, իմ ըստացած պատասխանը մեծամասնութեամբ սա է. մեղաւորը դրախտ կ'երթայ, կը փրկուի, իսկ վանականը՝ կը կործանուի: Իսկ Սուրբը կըսէ, որ մեղաւորը կը կործանուի իր մեղքին մէջ, եւ վանականը կը փրկուի իր առաքինութեան մէջ:

– Ինչո՞ւ, - կը հարցնեն:

Սուրբը կըսէ.

– Որովհետեւ մեղաւորը քառասուն տարի Աստուած գիտէ, քանի անգամներ կըսէր, ես պիտի ապաշխարեմ, վաղը վանք պիտի երթամ: Առաւօտը եղած է եւ նոյն կեանքը շարունակած է, իրեն բաւական փաստ տրուած է, որպէսզի փաստէ իր հաւատքը, բայց ինքը փաստած է, որ մեղաւոր պիտի մնայ, ոչ մէկ փաստ չկար, որ միւս առաւօտը պիտի արթնար եւ վանք պիտի երթար: Իսկ վանականը պիտի փրկուի, որովհետեւ քառասուն տարի, Աստուած գիտէ, քանի անգամ ըսաւ, որ ես պիտի լքեմ իմ կոչումս, աշխարհ պիտի վերադառնամ, մեղքեր պիտի գործեմ, բայց առաւօտն արթնցած է եւ իր վանքը, իր կոչումին մէջ մնալու վճռած է եւ որոշած է: Այնպէս որ, սիրելինե՛ր, մեզի համար ալ նոյնպէս է, մեր ներքին կեանքը, մեր ներքին աշխարհը շատ կարեւոր է, բայց պէտք է մենք անիկա դրսեւորենք եւ պէտք է աճապարենք անոր համար:

Կուզեմ ձեզի բանաստեղծութիւն կարդալ. գիտեմ որ քարոզներու մէջ բանաստեղծութիւն չի կարդացուիր, բայց ասիկա Պատրիարքի մը բանաստեղծութիւն է՝ նորոգ հանգուցեալ Սրբոյ Երուսաղէմի Պատրիարք Տէր Թորգոմ արքեպիսկոպոսի, որ ինքը որպէս մականուն կօգտագործէր Շէնմահ, գրած է բանաստեղծութիւններ եւ այսպէս ստորագրած է: Շատ հետաքրքրական անուն է Շէնմահը՝ ուրախ մահ, ինչպէ՞ս մէկը կրնայ դնել այսպիսի անուն մը իրեն, պէտք է իմանար, որ շէն-ը հայերենի մէջ շինարարութեան, շինել բայի արմատն է, եւ մահ-ը գաղտնագիրն է բոլոր քրիստոնեաներուն արտադրութեան: Եթէ ցորենի հատիկը հողի մէջ իյնալով չմեռնի, ինքն առանձին կը մնայ, բայց եթէ մեռնի շատ արդիւնք կու տայ: Այսպէս գրել է Շէնմահը.

Այնպէս արագ են անցել կեանքիս օրերն, Աստուած իմ,
Վաղը կանչես պիտի զիս, երբ անձկութեամբ կը լեցուիմ,
Արդեօք այնքան է նիհար փոխան շնորհիդ օրհնաբեր,
Զոր այս մարմնին դու տուիր շահարկելու համար, Տէ՛ր:

Հանգուցեալ Թորգոմ Պատրիարքը ժրաջան աշխատող էր: Ոչ ոք պարապ չէ տեսած զայն, միշտ կը զբաղուէր եւ միշտ շտապում էր աշխատելու եւ արտադրելու, որովհետեւ երիտասարդ տարիներուն զգացած է եւ գրած է կրկին. «Կը թափին հատ-հատ, տե՛ս, տերեւներս կը թափին»:

Սիրելինե՛ր, մեր տերեւներն ալ կը թափին հատ-հատ, ամէն օր: Եկէ՛ք մենք արդիւնաւորենք մեր այս օրերը, երբ մեր տերեւները տակաւին կանաչ են, արեւահամ պտուղներու վերածուի թէ՛ մեր անձերու փրկութեան եւ թէ՛ աշխարհի համար:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մէջ այս շաբաթ տեղի ունեցան կարեւոր ժողովներ. երեքշաբթի եւ չորեքշաբթի օրերը Գերագոյն Հոգեւոր Խորհրդի նիստեր կատարուեցան, եւ հինգշաբթիէն սկսեալ երեք օր գումարուեցաւ Հայաստանեայց Եկեղեցւոյ Թեմական-ներկայացուցչական ժողովը: Հայ Առաքելական Եկեղեցւոյ գրեթէ բոլոր թէմերէն եւ պատրիարքութիւններէն ժամանած մօտ ութսուն պատգամաւորներ՝ եկեղեցական եւ աշխարհական, երեք օրեր ամբողջ խորհուրդակցեցան եւ մեր եկեղեցական կեանքին առնչուող հարցերու շուրջ վարչական եւ կարգապահական էական որոշումներ առին, յատկապէս նկատի ունեցաւ ժողովը սիրիահայութեան ճգնաժամը եւ մեր եղբայրներու կրած կորուստները եւ ցաւերը: Մեծ վտանգ կը սպառնայ վաղեմի այս դարաւոր գաղութին, եւ մեր բոլորի քրիստոնէական եւ ազգային պարտականութիւնն է ձեռք երկարել անոնց այս դժուար օրերուն: Տէրը պահապան լինի Սիրիոյ անմեղ ժողովուրդին, զերծ պահէ վտանգներէն եւ զօրացնէ մեր հայութիւնը, իմաստութիւն շնորհէ գաղութին բոլոր առաջնորդներուն: Անգամ մը եւս փաստուեցաւ, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը որքան կարեւոր դեր կը կատարէ մեր ազգային-եկեղեցական կեանքի միասնականութիւնը ապահովելու գործին մէջ եւ որքան պէտք ունինք մենք՝ աշխարհացրիւ եկեղեցիներս անոր միացնող եւ ամբողջացնող առաջնորդութեանը, մեզի պէս կենտրոնախոյս Ազգի համար, որ ցրուած է երկրագնդի չորս կողմերում, Աստուծոյ մեծագոյն նուէրն է եւ օրհնութիւնը ունենալ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, որ իր մայրութեան շնորհիւ յաջողած է ի մի հաւաքել մեր Ազգի նշխարեալ կոտորակները մագնիսի մը նման եւ անկորնչելի մէկ Եկեղեցիի վերածել:

Մայր Աթոռը, իր Սրբազան Հիմնադիրը՝ Ս. Գրիգոր Լուսաւորչէն սկսեալ, նոյնացած է իր գահակալներուն հետ, Ամենայն Հայոց կաթողիկոսները դարբնած են տուեալ ժամանակի եկեղեցական դարաշրջանը իրենց իւրայատուկ վաստակով եւ գործունէութեամբ: Տարբեր չէ պարագան մեր օրերուն: Մեր ներկայ ժամանակներու եկեղեցական կեանքը կը ձեւաւորուի, ուղղութիւն եւ առաջնորդութիւն կը ստանայ Նորին Սուրբ Օծութիւն Տէր Տէր Գարեգին Երկրորդ Սրբազնագոյն Ամենայն Հայոց Կաթողիկոսի հովուապետութեան ներքոյ, եւ մենք այսօր կը փօնենք մեր սիրելի Հայրապետի գահակալութեան տասն ու երրորդ տարեդարձը եւ կ՛ուղղենք մեր սրտագին աղօթքները առ

Ասպուած հայրապետական այս մաղթանքի անուշաբուրումով: Վեհափառ Հայրապետի անձին մէջ Սուրբ Էջմիածնի փօնն է այսօր եւ առիթն է անգամ մը եւս խոնարհելու Էջմիածնի Քրիստոսաւանդ մեծ խորհուրդին առջեւ: Որպէս մեծ ընտանիք մը, անգամ մը եւս համախմբուած ենք Իջման Սուրբ Սեղանի շուրջը, Ամենայն Հայոց մեր Հայրապետի օծման եւ գահակալութեան տարեդարձը տօնելու: Կտրելիք տորթ եւ մարելիք մոմեր չունինք հոս, ճիշտ հակառակը՝ մշտավառ կանթեղ մը ունինք Լուսաւորչի: Այդ կանթեղի ձէթը կը հայթայթեն Ամենայն Հայոց կաթողիկոսները՝ քամելով իրենց կեանքէն, իրենց քրտինքէն, իրենց սրտամաշեցումէն, եւ ինչու չէ, երբեմն իրենց արիւնէն: Հեշտ գործ չէ Ամենայն Հայոց Հայրապետը դառնալ, որովհետեւ անոր պարտականութիւնն է Եկեղեցւոյ բոլոր մոմերը վառ պահել եւ վեր պահել Սուրբ Խաչը միշտ յաղթական:

Ես Վեհափառ Հայրապետի տասներորդ տարեդարձի առիթով որոշ խորհրդածութիւններ գրի առած էի երեք տարի առաջ եւ հոն ըսած էի՝ Վեհափառի պողպատեայ կամքին եւ հեստեւողութեանը շնորհիւ կրաձրանան եւրեւ եւրեւէ Հայոց Եկեղեցւոյ եօթը հրաշալիքները եւ աւելին, դժգոհներ կրնան ըլլան ի հարկէ, իր յեստապնդող կամքէն ձանձրացողներ, բայց օր մը պատմութիւնը պիտի գրէ, որ Գարեգին Կաթողիկոսը իր գործերը աւազի վրայ չէ գրած, այլ պեղած է ժայռի վրայ, թուլակամները պիտի լռեն տարիներ յետոյ՝ սրբուելով պիտի վերանան աշխարհի երեսէն իրենց գանգատներով միասին: Եւ սակայն քարերը պիտի շարունակէն խօսիլ, ինչու չէ՝ երգել Մեծ Շինարարի արդար փառքը:

Ասպուած առողջ պահէ Վեհափառ Հայրապետը, միշտ իմաստուն եւ պայծառատես Վերատեսուչը եւ Վերահսկիչ կարգուած Սուրբ Հոգիէն տասներեք տարիներ առաջ Քրիստոսի փառաւոր տունը՝ Սուրբ Եկեղեցին տնտեսելու համար:

Վեհափառ Տեր, վերջին տասներեք տարիներուն մենք շատ բան կը պարտինք Ձերդ Սրբութեանը եւ Ձեր աննկուն ջանասիրութեանը՝ տեսնելով՝ ինչպէս կը կանաչին խոպան դարձած եկեղեցւոյ դաշտերը մեր: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դարաւոր պատմութեան այս վերջին տասներեք տարիներուն Դուք դրիք Ձեր դրոշմը, եւ Ձերդ Սրբութեան մատանիին ներքոյ կը դարբնուի եւ ձեւ մը կը ստանայ Հայ Առաքելական Եկեղեցւոյ ներկան ու ապագան: Մենք կը տեսնենք, որ իրարու վրայ դիզուած տարիները քանակային եւ որակային տեսանելի տարբերութիւններ ստեղծելու սկսած են Մայր Աթոռի եւ մեր եկեղեցական կեանքին մէջ արդէն: Ձեր ընթացքը մեր բոլորիս համար կենդանի վկայ է, թէ յեստապնդուած աշխատանքը եւ գործին մէջ դրուած սէրն ու խնամքը ինչերի կարող են: Մենք՝ եկեղեցականներս եւ հաւատացեալներս միասին կրկին կը խոստովանինք հաւատարիմ մնալ Մայր Աթոռին եւ Ձեզի, որպէսզի ջանանք հասնիլ մեր լաւագոյնին, որպէսզի ուրախութիւն եւ մխիթարութիւն պատճառենք Ձեր հոգնատանջ հոգիին եւ միշտ լաւը կը փափագիք ամենուս համար: Տէրը աւելցնէ եւ բազմապատկէ Ձեր կորովը, ոյժը, առողջութիւնը եւ անպակաս ընէ Ձեր շուքը մեր եւ մեր ազգի վրայէն: Կը շնորհաւորենք այս առիթով Ձերդ Սրբութեան գահակալութեան տասներեքերորդ տարեդարձը: Ընդունեցէ՛ք մեր ազգի համայն որդիական բարեմաղթանքները՝ ուղղուած Ձեր արեւշատութեան, հաջողութեան, առողջութեան եւ անսասանութեան. ամէն: